ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ՍԵԴԱ ՏԻԳՐԱՆԻ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ 13-14-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (ԻԲՆ ԹԱՅՄԻԱՅԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ)

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ բ.գ.թ., պրոֆեսոր
Դավիթ Արտաշեսի Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր
Արշակ Պողոսի Փոլադյան

պ.գ.թ. **Գոռ Գևորգի Գևորգյան**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2026թ. հուլիսի 13-ին, ժամը 14:00-ին, Արևելագիտության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի 006 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2026թ. հունիսի 9-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ պ.գ.թ., դոցենտ Ա. Ա. Փաշայան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: 13-14-րդ դարերը բեկումնային նշանակություն են ունեցել իսլամական հասարակության զարգացման առումով: 1258 թ. մոնղոլների արշավանքի հետևանքով ավելի քան հինգ դար գոյատևած Աբբասյան խալիֆայության (750-1258 թթ.) կործանումը խորացնում է ճգնաժամային իրավիճակում գտնվող մուսուլմանական համայնքի՝ ումմայի պառակտումը, առաջանում է գաղափարական վակուում, երևան են գալիս քաղաքական, գաղափարական նոր հոսանքներ՝ կրոնական ձևակերպումներով: Ժամանակի պահպանողական հայացքներ ունեցող գործիչները խալիֆայության անկումը վտանգավոր էին համարում ումմայի միասնության տեսանկյունից: Այդ գործիչների շարքում առանձնանում է սուննիական ամենապահպանողական մազհաբի՝ հանբալիականության ներկայացուցիչ, միջնադարյան խոշորագույն կրոնաիրավագետ, տեսաբան Իբն Թայմիան (1263-1328 թթ), որը փորձում է վերարժևորել իսլամի հիմնարար սկզբունքները՝ ձևակերպելով իսլամական հասարակության թուլացման պատճառների մասին իր հիմնական հայացքները և առաջարկելով պետության ու հասարակության զարգացման իր տեսլականը:

Թեմայի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում վեր հանելու և խորքայնորեն հասկանալու տվյալ ժամանակահատվածում իսլամական հասարակության ներսում տեղի ունեցող պատմական, քաղաքական, կրոնամշակութային գործընթացները: Այն կարևոր է նաև միջնադարյան իսլամական հասարակության կրոնական աշխարհընկալման ուսումնասիրության տեսանկյունից, քանի որ թույլ է տալիս հասկանալ տվյալ ժամանակահատվածում մուսուլմանական աշխարհին հասանելի գիտելիքը և այդ գիտելիքի ընկալումներն ու գնահատումը: Այս տեսանկյունից կարևոր և հետաքրքրական են Իբն Թայմիայի գաղափարները, որոնց լայն կիրառությունը երբեմն հանգեցրել է տարակարծությունների և հակասական մեկնաբանությունների առաջացմանը: Իրարամերժ տեսակետներ են ձևավորվել Իբն Թայմիայի անձի, քաղաքական հայացքների, մասնավորապես, խալիֆայության ինստիտուտին վերաբերող մտքերի և մոտեցումների, ինչպես նաև սուֆիականությանը, քալամին՝ իսլամի դրույթների ռացիոնալ իմաստավորմանն առնչվող հարցերի շուրջ նրա տեսակետների վերաբերյալ:

Տարբեր ժամանակներում քաղաքական, սոցիալական դրդապատճառներով Մուհամմադ մարգարեի և մուսուլմանների առաջին սերունդների կենսակերպին վերադառնալու, իսլամին խորթ տարրերից հրաժարվելու կոչերով են հանդես եկել կրոնաքաղաքական շարժումներ, հոսանքներ, արմատական խմբավորումներ, որոնց մի մասը լայնորեն կիրառել և կիրառում է Իբն Թայմիայի գաղափարներն ու մտքերը՝ երբեմն վերաիմաստավորելով կամ աղավաղելով դրանք: Ասվածի վառ օրինակ է կրոնական քարոզիչ, բարենորոգիչ Մուհամմադ իբն Աբդ Ալ-Վահհաբը (1703-1792 թթ.), որի հիմնական խնդիրն արաբների շրջանում իսլամի անաղարտությունը վերականգնելն էր, և որը, զարգացնելով Իբն Թայմիայի գաղափարները, դրանք դարձրեց Արաբական թերակղզում հիմնադրված կրոնագաղափարական նոր շարժման՝ վահհաբականության հիմք: 1924 թ. Մուստաֆա Քեմալի կողմից

խալիֆայության վերացումը, հակագաղութային պայքարի արդյունքում արդեն 20-րդ դարի 40-60-ական թվականներին ի հայտ եկած արաբական անկախ պետությունների աշխարհիկ վարչակարգերի՝ հասարակական, քաղաքական, տնտեսական ոլորտում ունեցած անհաջողությունները խթանում են արմատական գաղափարներով տոգորված կառույցների ձևավորումը: Այդ գաղափարական միջավայրում նոր նշանակություն են ստանում Իբն Թայմիայի հայացքները՝ զգալի ներազդեցություն ունենալով մուսուլմանական աշխարհում կրոնաքաղաքական մտքի զարգացման վրա: Տարբեր նպատակներ և գործելաոճ ունեցող չափավոր և ծայրահեղական բազմաթիվ խմբավորումներ, մուսուլման գործիչներ առաջնորդվել են Իբն Թայմիայի գաղափարներով՝ հաճախ իմաստափոխելով դրանք: Ուստի թեմայի արդիականությունը պայմանավորվում է նաև իսլամական կրոնաքաղաքական տարբեր ուղղությունների վրա Իբն Թայմիայի գաղափարների ազդեցությունը պարզաբանելու և դրանց գործնական կիրառությունները բացահայտելու անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով գոյություն ունեցող հակասական մոտեցումները:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է 13-14-րդ դարերի պատմական իրադարձությունների համատեքստում համակողմանիորեն ուսումնասիրել Աբբասյան խալիֆայության կործանման և իսլամական ումմայի թուլանալու պատճառներին վերաբերող՝ Իբն Թայմիայի հայացքները, ստեղծված ճգնաժամից դուրս գալու ուղիների և հասարակության սոցիալ-քաղաքական կազմակերպման տեսլականը:

Վերոնշյալ նպատակին հետամուտ՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Լուսաբանել Աբբասյան խալիֆայության կործանումից հետո 13-14-րդ դարերում իսլամական աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները՝ վեր հանելով Իբն Թայմիայի հայացքների ձևավորման պատմական նախադրյալները:
- Համապարփակ ուսումնասիրել և վերլուծել ումման պառակտող վտանգավոր նորարարությունների դեմ Իբն Թայմիայի պայքարը, որը ներառում է քրիստոնեության, շիայական ուղղությունների, սուֆիականության, քալամին առնչվող հարցերի և ուղղությունների դեմ կրոնաիրավագետի քննադատությունները:
- Մանրամասնորեն հետազոտել և վերլուծել ումմայի միասնականությունը վերականգնելու, սոցիալ-քաղաքական առումով կազմակերպելու՝ Իբն Թայմիայի առաջարկած ուղիներն ու սկզբունքները, ինչպես նաև պարզաբանել այդ հարցերի շուրջ հետազոտողների իրարամերժ մոտեցումները:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ժամանակագրական առումով ատենախոսությունը գլխավորապես ընդգրկում է Իբն Թայմիայի ապրած ժամանակաշրջանը՝ 13-14-րդ դարերը, այսինքն՝ Աբբասյան խալիֆայության փլուզմանը հաջորդող առաջին տասնամյակները: Հաշվի առնելով վերոնշյալ դարերին նախորդող պատմական ժամանակաշրջանը ներկայացնելու կարևորությունը՝ ըստ անհրաժեշտության ուշադրություն է դարձվում նաև 7-12-րդ դարերին:

Իբն Թայմիայի գաղափարների հետագա կիրարկումների տիպական օրինակները ներկայացնելիս հակիրճ անդրադարձ է կատարվում նաև 18-րդ դարից 21-րդ դարի առաջին երկու տասնամյակների ժամանակահատվածին:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը: Իսլամական աշխարհի պատմաքաղաքական կերպափոխումները և դրանց համատեքստում Իբն Թայմիայի գործունեությունը ուսումնասիրելիս կիրառվել են պատմահամեմատական, պատմաքննադատական, նկարագրական, վերլուծական մեթոդները: Դրանք օգտագործվել են նաև խնդրո առարկա թեմայի վերաբերյալ տարբեր հետազոտողների ուսումնասիրությունների արդյունքները համադրելիս: Պատմահամակարգային մեթոդով պատմական իրողությունները դիտարկվել են ամբողջականությամբ և գործառման ներքին մեխանիզմների ու օրինաչափությունների տեսանկյունից: Քանի որ ուսումնասիրության առաջնային աղբյուրները արաբերեն միջնադարյան աշխատություններն են, ուստի խիստ կարևորվում է տերմինների ճշգրիտ նշանակության վերհանումը, և դրանից ելնելով՝ լայնորեն կիրառվել է տերմինաբանական վերլուծության մեթոդը, որը առանձնահատուկ նշանակություն ունի միջնադարյան ժամանակաշրջանների իրողությունները համարժեքորեն պատկերացնելու տեսանկյունից: Նոր և նորագույն շրջանում իսլամական արմատականության և Իբն Թայմիայի գաղափարների կապը, դրանց պահանջվածությունը պայմանավորող պատմական նախադրյալներն ուսումնասիրել ենք ռետրոսպեկտիվ (հետահայաց) մեթոդով: Կիրառվել են նաև տվյալների տեսական վերլուծության մեթոդներ՝ գիտական գրականության վերլուծություն, մեկնաբանում:

Ատենախոսության գիտական նորույթը: Չնայած Իբն Թայմիայի գործունեության և հայացքների վերաբերյալ առանձին ուսումնասիրությունների բազմազանությանը՝ հետազոտողները ուսումնասիրել են նրա առանձին գաղափարներ կամ աշխատություններ՝ երբեմն հաշվի չառնելով պատմական համատեքստը և հանգելով իրարամերժ եզրակացությունների ինչպես կրոնաիրավագետի մոտեցումների, այնպես էլ հետագայում իսլամական կրոնաքաղաքական խմբավորումների արժեհամակարգի վրա դրանց ազդեցության չափի և բնույթի մասին: Սույն ատենախոսությունը, պարունակելով նոր շեշտադրումներ, ուսումնասիրության նոր դիտանկյուն է առաջացնում և լույս սփռում 13-14-րդ դարերի պատմական, քաղաքական, սոցիալական, մշակութային-գաղափարական իրողությունների վրա՝ հնարավորություն տալով բացատրելու իսլամական հասարակության զարգացման հետագա ընթացքին առնչվող իրողությունները: Սույն հետազոտության շրջանակում 13-14-րդ դարերի պատմական շրջադարձային իրադարձությունների լույսի ներքո համակողմանիորեն ուսումնասիրվում և վերլուծվում են Իբն Թայմիայի գաղափարները, պատմաքաղաքական իրողություններից ելնելով իրավիճակային լուծումներ գտնելու մեխանիզմները, որի շնորհիվ պարզաբանվում են հետազոտողների շրջանում տարընկալումների պատճառները և հստակեցվում տարակարծությունների առարկա դարձած դրույթները, բացահայտվում դրանց ամբողջական նշանակությունները: Հարկ է նշել նաև, որ ատենախոսության շրջանակում հայերեն թարգմանությամբ առաջին անգամ են ներկայացվում կրոնաիրավագետի աշխատությունների անկյունաքարային նշանակություն ունեցող և տարընկալումների առարկա դարձած հատվածներ:

Գիտական վարկած

Սույն ատենախոսության շրջանակում առաջ է քաշվում այն վարկածը, որ իսլամական պետության և հասարակության զարգացման՝ Իբն Թայմիայի տեսլականը

ձևավորվել է որպես պատասխան 13-14-րդ դարերում իսլամական աշխարհում տիրող ճգնաժամին և դա վերացնելուն ուղղված իրավիճակային և իրատեսական լուծում է, որի նպատակն է արտաքին սպառնալիքների պայմաններում պահպանել ումմայի «ինքնությունը», հավասարակշռություն հաստատել խալիֆայության իդեալական մոդելի և փաստացի գոյություն ունեցող տիրակալության՝ մուլքի միջև՝ ընդլայնելով շարիաթի սահմանները և կիրառելիությունը իսլամական հասարակության սոցիալ-քաղաքական կազմակերպման հարցերում: Այդ տեսլականը ներառում է նորարարությունների դեմ պայքարը, որը, փաստորեն, ուներ առավելապես անվտանգային նշանակություն՝ միտված արտաքին մարտահրավերների պայմաններում իսլամական հասարակության պառակտվածության խորացումը կանխելուն: Վերլուծության ընթացքը ցույց է տալիս, որ Իբն Թայմիայի՝ իսլամական պետության և հասարակության զարգացման տեսլականը, ըստ էության, միջնադարյան իսլամական քաղաքական մտքի՝ քաղաքակրթական նոր համակարգին հարմարվելու (ադապտացվելու) ուղի է, որի անհրաժեշտությունը բխում է պատմաքաղաքական իրողություններից՝ ներառելով ումման պառակտող գործոնների դեմ պայքարը:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտությունն ունի գիտական և կիրառական նշանակություն: Ատենախոսության հիմնական դրույթները կարող են օգտագործվել նեղ մասնագիտական կրթական ծրագրերում և դասընթացներում: Իբն Թայմիայի աշխատությունների որոշ հատվածների՝ ատենախոսության մեջ առաջին անգամ ներկայացված թարգմանությունները կարող են կիրառվել իսլամագիտական, արաբագիտական ուսումնասիրություններում: Ատենախոսության վերջնարդյունքները կարող են օգտակար լինել ուսումնասիրվող ժամանակաշրջանին և տարածաշրջանին առնչվող պատմական հետազոտություններ կատարելիս, քանի որ հնարավորություն են ընձեռում խորքայնորեն հասկանալու պատմաքաղաքական, սոցիալ-մշակութային կերպափոխումները:

Հետազոտության շրջանակում որոշակի դրույթներ քննելիս զուգահեռաբար համեմատական վերլուծությամբ անդրադարձ ենք կատարել նոր և նորագույն շրջանում դրանց կիրարկումներին՝ այդ դրույթների պահանջվածությունը ցույց տալու նպատակով: Այդ պարագան, ինչպես նաև ատենախոսության մեջ առաջ քաշված նոր մոտեցումների և շեշտադրումների տրամաբանությունը ուսումնասիրության նոր դիտանկյուն են առաջացնում իսլամական մտքի զարգացման հետագա շրջանում Իբն Թայմիայի հայացքների տեղն ու դերը հետազոտելու առումով: Ուստի թեման հնարավորություն կընձեռի խորապես ընկալելու իսլամական արմատականության ներկայիս իրողությունները, կրոնաքաղաքական խմբավորումների, կազմակերպությունների գաղափարական և հայեցակարգային հիմնադրույթները: Ատենախոսությունը կարող է նպաստել նաև Հայաստանի հարակից պետություններում քաղաքական իսլամին առնչվող գործընթացներն ավելի խոր ըմբռնելուն:

Ատենախոսության փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը: Ատենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժինը: Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլվել են ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից հավանության արժանացած

գրախոսվող գիտական պարբերականներում տպագրված հոդվածներում, ինչպես նաև ներկայացվել միջազգային գիտաժողովներում:

Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածությունը: Ատենախոսությունը շարադրելիս օգտագործվել են արաբերեն սկզբնաղբյուրներ, անգլերեն, ռուսերեն, հայերեն մենագրություններ, հոդվածներ, հանրագիտարաններ: Առաջնային աղբյուրներն Իբն Թայմիայի աշխատություններն են: Այսպես, նորարարությունների դեմ ուղղված կրոնահիրավագետի քննադատությունները, *ջիհադ* հայեցակարգի պարզաբանումները, ումման սոցիալապես և քաղաքականապես կազմակերպելու, իշխանության թույլատրելի ձևերի վերաբերյալ մոտեցումները շարադրված են հիմնականում «Ճշմարիտ պատասխան նրանց, ովքեր փոխել են Մեսիայի կրոնը» (այսուհետև՝ «Ալ-Ջավաբ») (արաբ.՝الجواب الصحيح لمن بدل دين المسيح)[1], «Մերկացրած սուր՝ առաքյալին վիրավորողի դեմ» (արաբ.՝الصارم المسلول على شاتم الرسول)[2], «Եկեղեցիների խնդիրը» (արաբ.՝ مسألة في الكنائس) [3], «Ուղերձների և հարցերի ժողովածու» (արաբ.՝ مجموعة الرسائل و المسائل) [4], «Վասիտյան դավանանք» (արաբ.՝ العقيدة الواسطية) [5], «Կարճ կանոն կամ անհավատների դեմ պատերազմելու, նրանց հետ հաշտություն կնքելու և միայն անհավատության պատճառով նրանց սպանելը արգելելու վերաբերյալ» (արաբ.՝ قاعدة مختصرة في قتال الكفار ومهادنتهم وتحريم قتلهم لمجرد كفرهم) [6], «Մարգարեի սուննայի ճանապարհը՝ շիաների և կադարիների խոսքերը ժխտելիս» (արաբ.՝ منهاج السنة النبوية في نقض كلام الشيعة القدرية)[7] , «Ֆեթվաների ժողովածու» (արաբ.՝ مجموع فتاوى)[8], «Ղեկավարի և հպատակների (վիճակի՝ U. S.) բարելավման շարիաթական քաղաքականություն» (այսուհետև՝ «Շարիաթական քաղաքականություն») (արաբ.՝ السياسة الشرعية في إصلاح الراعي والرعية) [9] աշխատություններում: Թվարկվածներից վերջինը՝ «Շարիաթական քաղաքականությունը», առանցքային նշանակություն ունի Իբն Թայմիայի քաղաքական հայացքները ուսումնասիրելու առումով: Ատենախոսության շրջանակում քննության ենք առել այդ աշխատության ծավալուն տարբերակը, որը հրատարակվել է 2008 թ. Մեքքայում՝ Ալի իբն Մուհամմադ Ալ-Իմրանի խմբագրությամբ՝ Ստամբուլի «Սուլեյմանիա» գրադարանում՝ Օսմանյան կայսրության վեզիր Շեհիդ Ալի Փաշայի (մահ. 1716 թ.) հավաքածուում պահվող ձեռագրի հիման վրա[10]: Ծավալուն տարբերակը թույլ է տալիս լիարժեք պատկերացում կազմել ումման ղեկավարելու՝ Իբն Թայմիայի տեսլականի մասին:

---

[1] تقي الدين أحمد ابن تيمية، الجواب الصحيح لمن بدل دين المسيح، الرياض، دار العاصمة،1999م-1419 هـ.

[2] تقي الدين أحمد ابن تيمية، الصارم المسلول على شاتم الرسول، المملكة العربية السعودية، الحرس الوطني السعودي، 1983م-1403 هـ .

[3] تقي الدين أحمد ابن تيمية، مسألة في الكنائس، الرياض، مكتبة العبيكان،1995م-1416 هـ.

[4] تقي الدين أحمد ابن تيمية، مجموعة الرسائل و المسائل، بيروت ،دار الكتب العلمية، 1992م- 1412 هـ، المجلّدات 3-1.

[5] تقي الدين أحمد ابن تيمية، العقيدة الواسطية، الظهران، مؤسسة الدرر السنية للنشر،2011م- 1433 هـ.

[6] تقي الدين أحمد ابن تيمية، قاعدة مختصرة في قتال الكفار ومهادنتهم وتحريم قتلهم لمجرد كفرهم، الرياض، الناشر: المحقق(عبد العزيز بن عبد الله بن إبراهيم الزير آل حمد)، 2004م-1425 هـ.

[7] تقي الدين أحمد ابن تيمية، منهاج السنة النبوية في نقض كلام الشيعة القدرية، الرياض، جامعة الإمام محمد بن سعود الإسلامية، 1986م-1406 هـ.

[8] تقي الدين أحمد ابن تيمية، مجموع فتاوى، المدينة، مجمع الملك فهد لطباعة المصحف الشريف،2004م-1425 هـ.

[9] تقي الدين أحمد ابن تيمية،السياسة الشرعية في إصلاح الراعي والرعية، مكة، دار عالم الفوائد،2008م- 1429هـ.

[10] علي بن محمد العمران، مقدمة التحقيق، في السياسة الشرعية في إصلاح الراعي والرعية، مكة، دار عالم الفوائد للنشر والتوزيع،2008م-1429هـ ، ص 5–67.

Տե՛ս նաև Bori C., Istanbul, Süleymaniye Kütüphanesi MS Şehid Ali Paşa 1553: A Neglected Version of Ibn Taymīya's al-Siyāsa al-Shar ʿīya and Its Manuscript, History and Society during the Mamluk

Իբն Թայմիայի ժառանգության վերաբերյալ անկյունաքարային նշանակություն ունեն Հենրի Լաուսթի[11] ուսումնասիրությունները, որոնք մեկնակետ են ծառայել շատ հետազոտողների համար: Արժեքավոր են Միշել Թոմասի[12] ուսումնասիրությունները: Դրանց շարքում հարկ է առանձնացնել Իբն Թայմիայի հակաքրիստոնեական ամենանշանավոր «Ալ-Ջավաբ» աշխատությանը վերաբերող նրա հետազոտությունը, որում Իբն Թայմիայի՝ քրիստոնեության դեմ ուղղված փաստարկներն ու մոտեցումները վերլուծելուց զատ, թարգմանաբար ներկայացվում է աշխատության մեկ երրորդ մասը[13]: Իբն Թայմիայի կրոնափիլիսոփայական, կրոնաիրավական հայացքների վերաբերյալ յուրօրինակ են ժամանակակից հետազոտող Ջոն Հուվերի[14] ուսումնասիրությունները. նա տեքստային մանրակրկիտ վերլուծությամբ առաջարկել է կրոնաիրավագետի հայացքների նորովի մեկնաբանություններ:

Իսլամական բանավիճային (պոլեմիկ) գրականությունը, քրիստոնեության և հուդայականության դեմ փաստարկները, իսլամական մոտեցումները և դրանց համատեքստում Իբն Թայմիայի մեկնաբանությունները հասկանալու առումով կարևոր են Հավա Լազարուս-Յաֆեեի[15], Նանսի Ռոբերտսի[16], Իսմայիլ Աբդուլլահի[17], Սոնա

Period (1250–1517). Studies of the Annemarie Schimmel Institute for Advanced Study III, Bonn, Bonn University Press, 2021, pp 9-60.

[11] Laoust H., Essai sur les doctrines sociales et politiques de Takī-d-Dīn Aḥmad b. Taimiya, canoniste ḥanbalite, né à Harrān en 551/1262, mort à Damas en 728/1328, Le Caire, l'Institut français d'archéologie orientale, 1939.

[12] Michel T., "Ibn Taymiyya: Islamic Reformer". Studia missionalia, Vol. 34, Italy, Pontificia Università Gregorian, 1985, pp 213-232; Michel T., "Ibn Taymiyya's Sharḥ on the Futūḥ al-Ghayb of ʿAbd al-Qādir al-Jīlānī", Hamdard Islamicus, Vol. 4, No. 2, Karachi, Hamdard Foundation, 1981, pp 3–12 ; Michel T., "Ibn Taymiyya's Critique of Falsafa."Hamdard Islamicus, Vol. 6, No. 1, Karachi, Hamdard Foundation, 1983, pp 3-14.

[13] Michel T., A Muslim theologian's response to Christianity: Ibn Taymiyya's al-Jawab al-sahih, New York, Caravan Books, 1984.

[14] Hoover J., "Foundations of Ibn Taymiyya's Religious Utilitarianism," in Philosophy and Jurisprudence in the Islamic World, Berlin, de Gruyter, 2019, pp. 145–168.; Hoover J., Ibn Taymiyya as an Avicennan theologian: a Muslim approach to God's self-sufficiency. Harvard Theological Review, No. 1, Cambridge, Cambridge University Press, 2006, pp. 34-46.; Hoover J., The Justice of God and the Best of All Possible Worlds: The Theodicy of Ibn Taymiyya, Theological Review, Vol. 27, No. 2, Cambridge, Cambridge University Press, 2006, pp. 53-75.; Hoover J., Ibn Taymiyya's Theodicy of Perpetual Optimism, Leiden, Brill, 2007.

[15] Lazarus-Yafeh H., "Some Neglected Aspects of Medieval Muslim Polemics against Christianity." Harvard Theological Review, Vol. 89, No. 1, Cambridge, Cambridge University Press, 1996, pp. 61–84.

[16] Roberts N., Reopening the Muslim-Christian Dialogue of the 13th-14th Centuries: Critical Reflections on Ibn Taymiyyah's Response to Christianity in al-Jawāb al-Ṣaḥīḥ li-man baddala dīn Al-Masīḥ, The Muslim World, Vol. 86, No. 3-4, Mafraq, Al-Bayt University, 1996, pp 342-366.

[17] Abdullah I., "Tawḥīd and Trinity: A Study of Ibn Taymiyyah's al-Jawāb al-Ṣaḥīḥ." Intellectual Discourse, Vol. 14, No. 1, Malaysia, IIUM Press, 2006, pp 89-106.

Գրիգորյանի[18], Ֆարիս Զվիրանի [19], Գաբրիել Ռեյնոլդսի [20] գիտական հոդվածներն ու վերլուծությունները:

Հատկանշական են Իբն Թայմիայի՝ սուֆիականությանն առնչվող մոտեցումներին վերաբերող ուսումնասիրությունները: Իբն Թայմիայի՝ սուֆի լինելու կամ, առնվազն, սուֆիական գաղափարներով ազդված լինելու խնդիրն ուսումնասիրելու տեսանկյունից ուշագրավ են Հենրի Լաուսթի, Ալեքսանդր Կնիշի[21], Ֆրից Մայերի[22], Դիեգո Սարիոյի[23],Ֆազլուր Ռահմանի[24], Արջան Փոսթի[25], Ջորջ Մակդիսիի[26] հետազոտությունները:

Իբն Թայմիայի քաղաքական հայացքների վերաբերյալ արժեքավոր են Էրվին Ռոզենտալի[27], Մոնա Հասանի[28], Վիլֆերդ Մադելունգի[29], Օվամիր Անջումի[30], Կամարուդդին Խանի,[31] Հասան Քունաքաթայի[32] ուսումնասիրությունները: Ուշագրավ են հատկապես *խալիֆայության* ինստիտուտի վերաբերյալ Իբն Թայմիայի սկզբունքներին և մոտեցումներին վերաբերող ուսումնասիրությունները: Այսպես, Հենրի Լաուսթը, Էրվին Ռոզենտալը, Կամարուդդին Խանը հանգել են այն եզրակացության, որ Իբն Թայմիան հերքել է խալիֆայության վերականգնման անհրաժեշտությունը: Մոնա Հասանն իր ուսումնասիրության շրջանակում մանրամասն քննել է Հենրի Լաուսթի տեսակետը և մերժել այն: Խնդրո առարկա հարցն ուսումնասիրելիս

[18] Grigoryan S., The Trinity as seen by Muslims with a focus on Ibn Taymiyyah's perception of the doctrine, Annual of Medieval Studies at CEU, Vol. 18, Budapest, CEU Press, 2012, pp 37-47.

[19] Zwirahn F., Typologies and Argumentation Tactics in Religious Polemics An Analysis of al-Jawāb al Ṣaḥīḥ and the Cyprus Letter, Entangled Religions, Vol. 5, United States, Princeton University, 2018, pp 44-94.

[20] Reynolds G., On the Qur'anic Accusation of Scriptural Falsification (tahrîf) and Christian Anti-Jewish Polemic, Journal of the American Oriental Society, Vol. 130, No. 2, New Haven, American Oriental Society, 2010, pp 189-202.

[21] Knysh A., Ibn 'Arabi in the Later Islamic Tradition: The Making of a Polemical Image in Medieval Islam (Suny Series in Islam) New York, State University of New York Press, 1998.

[22] Meier F., "The Cleanest about Predestination: A Bit of Ibn Taymiyya," Essays on Islamic Piety and Mysticism, Leiden, Brill, 1999, pp 309-334.

[23] Sarrio D., "Spiritual Anti-elitism: Ibn Taymiyya's Doctrine of Sainthood (WalāYa)." Islam and Christian–Muslim Relations, Vol. 22, No. 3, London & New York, Routledge, 2011, pp 275-291.

[24] Rahman F., Islam, London, Weidenfeld & Nicolson, 1966.

[25] Post A., The Journeys of a Taymiyyan Sufi: Sufism through the Eyes of ʿImād al-Dīn Aḥmad al-Wāsiṭī (d. 711/1311), Studies on Sufism, Leiden/ Boston, Brill, 2020, Vol. 6.

[26] Makdisi G., "Ibn Taymiyya: A Sufi of the Qadiriya Order." American Journal of Arabic Studies, No. 1, Leiden, Brill, 1973, pp. 118-129.; Makdisi G., "The Hanbali school and sufism." Boletín de la Asociación Española de Orientalistas, No. 15, Madrid, Asociación Española de Orientalistas, 1979, pp. 115-126.

[27] Rosenthal E., Political thought in medieval Islam: An introductory outline, Cambridge, "Cambridge University Press", 1962.

[28] Hassan M., "Modern Interpretations and Misinterpretations of a Medieval Scholar: Apprehending the Political Thought of Ibn Taymiyya", Ibn Taymiyyah and His Times, Oxford , Oxford University Press, 2010, pp. 338–366.

[29] Madelung W., The succession to Muḥammad: A study of the early Caliphate, Cambridge, Cambridge University Press, 1997.

[30] Anjum O., Politics, Law, and Community in Islamic Thought, The Taymiyyan Moment, Cambridge, Cambridge University Press, 2012.

[31] Qamaruddin K., Political Thought of Ibn Taymiyyah, New Delhi, Adam Publishers & Distributors, 2005.

[32] كوناكاتا ح.، النظرية السياسية عند ابن تيمية، الدمام، "دار الأخلاء"، 1994م-1414 هـ .

վերոնշյալ հեղինակների հետազոտությունները համեմատվել են Իբն Թայմիայի աշխատությունների համապատասխան հատվածների հետ, համապարփակ ուսումնասիրության են ենթարկվել հեղինակի մոտեցումները, կատարվել են համապատասխան եզրահանգումներ:

Իբն Թայմիայի գաղափարների կիրառումները նոր և նորագույն շրջանում բացահայտելու համար կարևոր են Մուհամմադ իբն Աբդ Ալ-Վահհաբի[33], Ուսամա բեն Լադենի [34], Հասան Ալ-Բաննայի[35], Յուսուֆ Ալ-Կարդավի[36], Սայիդ Կուտբի[37], Ռաշիդ Ռիդայի[38], Աբդալլահ Յուսուֆ Ազզամի[39], Աբդ Ալ-Սալամ Ֆարաջի[40] և այլոց աշխատությունները, ֆեթվաները, ուղերձները: Իսլամական արմատականության արդի միտումները խորապես ըմբռնելու և դրա ներկա դրսևորումների ու Իբն Թայմիայի գաղափարների կապը ուսումնասիրելու առումով հետաքրքրական են Սարգիս Գրիգորյանի[41], Դավիթ Հովհաննիսյանի [42], Էմանուել Սիվանի[43], Դանիել Բենջամինի և Սթիվեն Սայմոնի[44], Պոլ Հեքի[45] և այլոց գիտական հոդվածներն ու ուսումնասիրությունները: Ուսումնասիրողները համակարծիք չեն այն հարցի առնչությամբ, թե արդյոք Իբն Թայմիան «Ալ-Կաիդա»-ի և նմանատիպ այլ խմբավորումների գաղափարական նախահայրն է: Որոշ հետազոտողներ, ինչպես, օրինակ, Էմանուել Սիվանը[46], Դանիել Բենջամինը և Սթիվեն Սայմոնը[47], վկայում են, որ Իբն Թայմիան իրապես արմատական իսլամի համար գաղափարական նախադրյալներ է ստեղծել, և անմիջական զուգահեռներ կան նրա գաղափարների ու իսլամական արմատական հոսանքների գաղափարախոսությունների միջև: Մյուսները, ինչպես, օրինակ, Պոլ Հեքը, գտնում են, որ «Ալ-Կաիդա»-ն նենգափոխել է Իբն Թայմիայի գաղափարները՝ օգտագործելով դրանք իր ծրագրերը հիմնավորելու համար: Ըստ Հեքի՝ Իբն Թայմիան *ջիհադ* հայեցակարգը օգտագործում էր իսլամական ումմայի ինքնությունը պահպանելու և համայնքի խնդիրները լուծելու համար,

---

33 محمد بن عبد الوهاب، كتاب التوحيد، مصر، مكتبة عباد الرحمن – مكتبة العلوم والحكم، 2008م- 1429 هـ.

34 أسامة بن لادن، أيمن الظواهري، رفاعي طه، فتوى ب«قتل الامريكيين في كل مكان»، «الجبهة الإسلامية العالمية للجهاد ضد اليهود والصليبيين»، القدس العربي، لندن، 1998م-1418 هـ، 23 شباط - شوال 26، ص 3، https://irp.fas.org/world/para/docs/980223-fatwa-orig.htm [հասանելի է 08.07.2025]

35 حسن البنا، مذكرات الدعوة والداعية حقيقة الجماعة بقلم مؤسسها، الجيزة، مركز الاعلام العربي، 2011م-1432 هـ.

36 يوسف القرضاوي، أولويات الحركة الإسلامية، دون مكان نشر، مؤسسة الرسالة، 2000م-1420 هـ.

37 سيد قطب، معالم في الطريق، المملكة العربية السعودية، دار الشروق، 1969م-1388 هـ.

38 محمد رشيد رضا، تفسير المنار، القاهرة، دار المنار،1947م- 1367 هـ ، الجزء 4;1947م- 1367 هـ، الجزء 7; 1930م-1349 هـ، الجزء 11.

39 عبدالله عزام، الدفاع عن أراضي المسلمين أهم فروض الأعيان، بيروت، دار بن حزم، 2016 م-1437 هـ.

40 محمد عبد السلام فرج، الفريضة الغائبة، https://url-shortener.me/7QJM [հասանելի է 05.03.2025]

41 Գրիգորյան Ս., Իսլամական պետություն: Ակունքներից մինչև խալիֆայության հռչակում, Երևան, ԵՊՀ հրատ., 2016:

42 Հովհաննիսյան Դ., «Սուննիական ծայրահեղականության դրսևորումները. «ներկան» եվ «ապագան»», Վերլուծական տեղեկագիր 7, Երևան, ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, 2015, էջ 8-29:

43 Sivan E., Radical Islam: Medieval Theology and Modern Politics, Enlarged Edition, New Haven, Yale University Press, 1990.

44 Benjamin D., Simon S., The Age of Sacred Terror, New York, Random House, 2002.

45 Heck P., "'Jihad' Revisited." The Journal of Religious Ethics, Vol. 32, No. 1, Hoboken, Blackwell Publishing Ltd, 2004, pp. 95-128. http://www.jstor.org/stable/40018156. [հասանելի է 02.09.2025].

46 Sivan E., նշվ. աշխ.:

47 Benjamin D., Simon S., նշվ. աշխ.:

քաղաքական և տարածքային առումով նպատակներ և հետաքրքրություններ չուներ, ուստի «քաղաքական իսլամն այսօր և Իբն Թայմիայի գործունեությունը ներկայացնում են կրոնական գիտակցության երկու ձևեր»[48]: Համակարծիք ենք այն առումով, որ «Ալ-Կաիդա»-ն և մյուս խմբավորումները երբեմն աղավաղում են կրոնաիրավագետի մտքերը կամ դրանք կտրում են համատեքստից և կիրառում են մասնակիորեն՝ անտեսելով դրույթների ամբողջական իմաստները, սակայն անվերապահորեն չենք կարող համաձայնել այն պնդմանը, թե Իբն Թայմիան պետության կառավարման և քաղաքական հարցերն անտեսում էր: Այդ հարցերը կրոնաիրավագետի ուշադրության կենտրոնում էին. նա ոչ միայն քննել է դրանք իր աշխատություններում, այլև գործնական գործնական պայքար է մղել և պետությունը շարիաթով կառավարելու ուղղությամբ լայն գործունեություն ծավալել: Իբն Թայմիայի ազդեցության չափի վերաբերյալ տարակարծությունները հանգամանորեն ուսումնասիրել է Էլիզաբեթ Բարրեն՝ համեմատելով և վերլուծելով վերոնշյալ և այլ ուսումնասիրողների աշխատանքները[49]: Նա իրավացի է՝ նշելով, որ, չնայած տարակարծություններին, ուսումնասիրողները համակարծիք են այն առնչությամբ, որ Իբն Թայմիան մեծ ազդեցություն ունի արմատական խմբերի՝ հատկապես «Ալ-Կաիդա»-ի գաղափարախոսության ձևավորման և գործողությունների տեսական հիմնավորման վրա[50]:

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից (որոնք բաժանվում են համապատասխան ենթագլուխների), եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորվում են թեմայի արդիականությունը, ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, ներկայացվում են ատենախոսության ժամանակագրական սահմանները, մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, տրվում է օգտագործված գրականության համառոտ տեսություն:

Ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է **«ԻԲՆ ԹԱՅՄԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 13-14-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ»** և կազմված է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ **«Աբբասյան խալիֆայության կործանումը և պատմաքաղաքական փոփոխություններն իսլամական աշխարհում (13-14-րդ դարեր)»**, անդրադարձ է կատարվում իսլամական աշխարհում տեղի ունեցող պատմական փոփոխություններին, որոնք նոր իրավիճակ են ստեղծում տարածաշրջանում, և որոնք էլ կազմում են Իբն Թայմիայի հայացքների ձևավորման պատմական համատեքստը: Մասնավորապես ներկայացվում են 1258 թ. Բաղդադի անկումը և Աբբասյան խալիֆայության հինգհարյուրամյա պատմության ավարտը, Մամլուքյան սուլթանության ու Իրանի մոնղոլական Իլխանության հակամարտությունը: Երկրորդ ենթագլխում՝ **«Իբն Թայմիայի գործունեությունը իսլամական աշխարհի**

---

48 Heck P., նշվ. աշխ., էջ 117:

49 Barre E., The Shaykh Al-Islam: The legacy of Ibn Taymiyya in 20th century political Islam, Islamic Tradition, 2004.

50 Նշվ. աշխ., էջ 19:

մարտահրավերների դեմ պայքարի համատեքստում», ներկայացվում են Իբն Թայմիայի գործունեությունը, մասնակցությունը մոնղոլական արշավանքներին դիմագրավելուն, մամլուքյան իշխանությունների հետ հարաբերությունները: Երրորդ՝ «***Մոնղոլների դեմ ջիհադական պայքարը և ջիհադ հայեցակարգի՝ Իբն Թայմիայի մեկնաբանությունները***» ենթագլխում ուսումնասիրվում են ջիհադ գաղափարը և դրա առնչությամբ Իբն Թայմիայի հայացքները, մասնավորապես լուսաբանվում են ջիհադի նշանակությունը և կարևորությունը, տեսակները, նպատակները: Ենթագլխում ներկայացվում են նաև Իբն Թայմիայի հակամոնղոլական ֆեթվաները, վերլուծվում են ժամանակի պատմական և քաղաքական իրադրության համատեքստում իսլամի դիտանկյունից մոնղոլների դեմ ռազմական պայքարի անհրաժեշտությունը հիմնավորելու ուղիները:

«ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՒՄՄԱՅԻ ՊԱՌԱԿՏՎԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐ» խորագրով երկրորդ գլուխը կազմված է հինգ ենթագլխից: Այս գլխում ներկայացվում են այն բոլոր գործոնները, նորարարությունները, որոնք, ըստ Իբն Թայմիայի, հանգեցրել են ումմայի պառակտմանը և իսլամական աշխարհում տիրող ճգնաժամին: Առաջին՝ **«Նորարարությունների առաջանալու պատճառները»** ենթագլխում ուսումնասիրվում և ընդհանուր գծերով ներկայացվում են իսլամական ավանդույթում սուրբգրային տեքստերի փոփոխություններն անվանող *թահրիֆ* հայեցակարգը, այդ փոփոխությունները մերժելու՝ մուսուլման հեղինակների փաստարկները, որոնց համատեքստում լուսաբանվում են կրոնում նորամուծությունների պատճառների առնչությամբ Իբն Թայմիայի մոտեցումները: Երկրորդ՝ **«Քրիստոնեամուսուլմանական դավանաբանական վեճերը»** ենթագլխում Իբն Թայմիային նախորդող գործիչների բանավեճերի համատեքստում ամփոփ կերպով վերլուծվում են կրոնաիրավագետի՝ քրիստոնեությանն ուղղված քննադատությունները: Երրորդ ենթագլուխը՝ **«Շիայականության ուղղությունները՝ որպես ումմայի պառակտման պատճառ: Պայքարի գաղափարական ու գործնական դրսևորումները»,** վերաբերում է շիայականության դեմ ուղղված պայքարի պատմական, քաղաքական և մշակութային համատեքստին, պատճառներին, վերլուծվում են շիայականության ուղղությունների և դրանց հիմնական դրույթների քննադատությունները: Չորրորդ՝ **«Սուֆիական որոշ դրույթներ և ծիսակարգեր՝ որպես ումման պառակտող գործոններ»** ենթագլխում ներկայացվում են Իբն Թայմիայի՝ սուֆիականությանը վերաբերող մոտեցումների և վերաբերմունքի մասին հետազոտողների իրարամերժ վերլուծությունները՝ առկա ուսումնասիրություններին հավելելով մեր դիտարկումները, եզրակացությունները: Հինգերորդ՝ «**Քալամի հիմնական հարցերը՝ որպես ումման պառակտող գործոններ**» ենթագլխում անդրադարձ է կատարվում քալամի հիմնական հարցերին և դրանց առնչությամբ Իբն Թայմիայի մեկնաբանություններին: Հատուկ ուշադրություն է դարձվում Ղուրանի արարվածության հարցին՝ հաշվի առնելով Աբբասյան խալիֆայության պատմության շրջանակում դրա առանցքային նշանակությունը, ծագման պատմության կարևորությունը:

Ատենախոսության երրորդ՝ **«ՈՒՄՄԱՅԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ**

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ» գլխում ներկայացվում են Աբբասյան խալիֆայության փլուզումից հետո ումման քայքայված վիճակից հանելու, հասարակությունը սոցիալապես և քաղաքականապես կազմակերպելու սկզբունքները, որոնք կազմում են Իբն Թայմիայի՝ ումման ղեկավարելու ծրագիրը, այն է՝ «Շարիաթական քաղաքականությունը», որով էլ կրոնաիրավագետը, ըստ էության, միջանկյալ դիրք է զբաղեցնում արդեն գոյություն ունեցող տեսությունների շրջանում: Առաջին՝ **«Պատմական իրողությունների խորապատկերում իսլամական քաղաքական մտքի կերպափոխումները մինչև Աբբասյան խալիֆայության փլուզումը»** ենթագլխում անդրադարձ է կատարվում իսլամական քաղաքական մտքին այնքան, որքան առնչվում է խնդրո առարկա թեմային և անհրաժեշտ է Իբն Թայմիայի քաղաքական հայացքները հասկանալու, դրանց առանձնահատկությունը բացահայտելու տեսանկյունից: Վերլուծվում է *իմամություն-սիյասա* (արաբ.՝ سياسة - إمامة) երկատումը (դիխոտոմիան), ուսումնասիրվում են իսլամական քաղաքական մտքի զարգանալու առումով կարևոր նշանակություն ունեցող, այդ թվում՝ արաբամուսուլմանական պերիպաթետիկ փիլիսոփայության նշանավոր գործիչների հիմնական տեսությունները և գոյություն ունեցող պատմաքաղաքական իրավիճակը շարիաթի դրույթներով ձևակերպելու փորձերը: «**Պատմաքաղաքական կերպափոխումների համատեքստում ումմայի գերագույն իշխանության մոդելի՝ Իբն Թայմիայի հայեցակարգը**» խորագրով երկրորդ ենթագլխում մանրամասն ուսումնասիրվում և վերլուծվում են մուլքի թույլատրելի լինելու և խալիֆայությունը վերականգնելու անհրաժեշտության մասին Իբն Թայմիայի մոտեցումները՝ զուգահեռաբար անդրադարձ կատարելով որոշ հետազոտողների երբեմն իրարամերժ մեկնաբանություններին: Երրորդ՝ **«Շարիաթի հիմքով կենտրոնացված քաղաքական իշխանության պատմական կարևորությունը»** ենթագլխում ուսումնասիրվում և ներկայացվում են քաղաքական իշխանության՝ որպես կրոնի գոյատևման նախապայմանի կարևորության, ղեկավարի պարտականությունների և անհրաժեշտ որակների, ումմայի հետ համագործակցության խնդիրների, ինչպես նաև միաժամանակ մի քանի կառավարիչների գոյության վերաբերյալ Իբն Թայմիայի մոտեցումները և դրանց մասին ուսումնասիրողների դիտարկումները: Չորրորդ՝ «**Ումման կառավարելու և հասարակական հարաբերությունները կարգավորելու սկզբունքները**» ենթագլխում ուսումնասիրվում են իշխանության ներկայացուցիչների՝ քաղաքական ղեկավարների ու ալիմների միմյանց և հասարակության հետ համագործակցելու, ֆինանսական, սոցիալ-տնտեսական հարցերը, պատիժներն արդարացի կիրառելու խնդիրները կարգավորելու՝ Իբն Թայմիայի առաջարկած չափանիշները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ամփոփվում են աշխատանքի հիմնական արդյունքները և եզրահանգումները.

- Հինգ դար գոյատևած Աբբասյան խալիֆայության կործանումն ազդում է ումմայի պատմական ընթացքի վրա: Բաղդադի անկումից հետո իսլամական աշխարհում տիրող ճգնաժամը, որը հանգեցրել էր խալիֆայության փլուզմանը, էլ ավելի է սաստկանում: Ստեղծված ճգնաժամը Իբն Թայմիային մղում է մտորելու ումմայի պառակտվելու պատճառների, ստեղծված իրավիճակից դուրս գալու կարևորագույն խնդիրների մասին և առաջարկելու իսլամական հասարակությունը սոցիալ-

քաղաքական առումով կազմակերպելու նոր հայեցակարգ, գաղափարներ և մոտեցումներ, որոնք արդիական էին լինելու հետագա դարերի ընթացքում: Իբն Թայմիան իրատեսորեն է մոտենում նոր իրավիճակներին՝ համատեղելով մուսուլմանական համայնքի պաշտպանությունը և շարիաթի կանոնների պահպանումը, ինչպես նաև իսլամական իրավական համակարգի՝ նոր իրավիճակին հարմարվելու հնարավորությունը:

• 13-14-րդ դարերում քրիստոնեության, շիայական ուղղությունների, սուֆիականության, քալամի որոշ դրույթների քննադատությունները, կրոնական բանավեճերը, իսլամը նորարարություններից մաքրելու կոչերն ու այդ ուղղությամբ գործնական քայլերը ոչ միայն միտված էին անաղարտ իսլամը պաշտպանելուն, այլև արտաքին և ներքին ճնշումների հետևանքով վերահսկողությունից հեռացող քաղաքակրթական-մշակութային համակարգը վերահսկողության դաշտ վերադարձնելու փորձեր էին: Իբն Թայմիայի կողմից քրիստոնեության, իսլամի ուղղությունների որոշ դրույթների քննադատությունը պետք է դիտարկել հեղինակի ապրած ժամանակաշրջանի պատմական համատեքստում, քանի որ Ղուրանին և Սուննային հակասող դրույթները մերժելը ումմայի միասնականությունը վերականգնելուն ուղղված կարևոր քայլ էր:

• 13-14-րդ դարերի հակաշիայական դրսևորումները մի կողմից՝ կարելի է դիտարկել շիայականություն ընդունած իլխանների, շիայական տարբեր խմբերի քաղաքական, ռազմական, կրոնական-գիտական ազդեցության դեմ մամլուքյան սուլթանների վարած քաղաքականության համատեքստում՝ որպես սուննի-շիա քաղաքական, մշակութային և կրոնական ազդեցության համար պայքարի, մրցակցության և հակամարտության դրսևորում, մյուս կողմից՝ որպես սուննի կրոնահիրավագետի՝ Ղուրանով և Սուննայով չհիմնավորվող նորարարությունների նկատմամբ անհանդուրժողականության արտահայտություն և անաղարտ իսլամը պահպանելուն ուղղված պայքար: Սուննի-շիա բանավիճային գրականության ստեղծումը կարևոր նշանակություն է ունենում իսլամի այդ երկու ճյուղերի դավանաբանական «ինքնության» ձևավորման հարցում:

• Արտաքին հարձակումներին դիմագրավելու և իսլամը վտանգավոր նորարարություններից զերծ պահելու անհրաժեշտության պայմաններում ումմայի առաջնահերթ խնդիրներ էին դառնում համախմբումը և քաղաքական կազմակերպումը: Դրանցով էր պայմանավորվում խալիֆայության վերականգնման պարտադիր և մուլքի թույլատրելի լինելու հարցերի սուր հնչեղությունը, քանի որ ստեղծված պատմաքաղաքական հանգամանքներում խալիֆայությունը վերականգնելը գործնականում հնարավոր չէր, իսկ հասարակությունը քաղաքականապես կազմակերպելը խիստ անհրաժեշտություն էր: Իբն Թայմիան, որն ամբողջ սուննիական կրոնահիրավական համակարգի ամենահեղինակավոր անձնավորություններից էր, իրապես հնարավոր լինելու դեպքում պարտադիր էր համարում խալիֆայության կազմավորումը, սակայն, լինելով իրատես գործիչ, հասկանում էր, որ իր ապրած ժամանակաշրջանում խալիֆայություն վերականգնել հնարավոր չէ, իսկ պառակտված ումման հետագա աղետներից զերծ պահելու և վերամիավորելու միակ եղանակը շարիաթին հետևելն է և իսլամի օրենքները պահպանելը, որը կարելի էր ապահովել

քաղաքական իշխանության պայմաններում: Դա է պատճառը, որ կրոնահիրավագետը գործնականում առաջնային խնդիր էր դիտարկում ումմայի ամբողջականությունը պահպանելու և իսլամը վտանգավոր նորարարություններից զերծ պահելու նպատակով հասարակության քաղաքականապես կազմակերպված լինելը, ոչ թե բուն խալիֆայության վերականգնումը: Ուստի խիստ անհրաժեշտության պայմաններում, ինչպես իր գործունեության ժամանակաշրջանում էր, հաշվի առնելով թույլատրելի և արգելված արարքների վնասակարության ու օգտակարության հարաբերակցությունը, ումմայի առաջնահերթ շահերը՝ թույլատրելի էր համարում մուլքի կազմավորումը, որը, սակայն, անհրաժեշտության բացակայության դեպքում անթույլատրելի էր: Հետևաբար կարող ենք նշել, որ հեղինակը ճկունություն է ցուցաբերում՝ չներկայացնելով իր ժամանակի համար անիրատեսական պահանջներ:

• Իբն Թայմիայի աշխատությունների մանրազնին քննությունը ցույց է տալիս խալիֆայության վերականգնման անհրաժեշտությունը մերժելու՝ որոշ հեղինակների կողմից Իբն Թայմիային վերագրվող տեսությունների անհիմն լինելը: Այն հանգամանքը, որ կրոնահիրավագետը տվյալ ժամանակահատվածում թույլատրելի էր համարում այդ կարևոր սկզբունքից նահանջելը և մուլքի կազմավորումը՝ հանուն ավելի մեծ օգուտի, բոլորովին չի նշանակում, որ նա անհրաժեշտ և պարտադիր չի համարում խալիֆայության կազմավորումը: Ուստի միայն պատմական իրադարձությունների համատեքստում է հնարավոր լիարժեքորեն հասկանալ կրոնահիրավագետի հայացքները, քանի որ դրանք ուղղակիորեն բխում են ժամանակաշրջանի իրողություններից:

• Իբն Թայմիան անհրաժեշտության դեպքում հնարավոր է համարում մի քանի ղեկավարների՝ հետևաբար նաև պետությունների գոյությունը՝ հանուն համընդհանուր բարօրության, ումմայի գերակա շահերի, այնպես, ինչպես խիստ անհրաժեշտության դեպքում թույլատրելի է դառնում արգելվածը: Իսլամական աշխարհի համար ճգնաժամային պայմաններում հիմնարար արժեք *ումման* առաջնահերթություն է ստանում: Ումմայի միասնությունը վերականգնելու համար կյանքի բոլոր բնագավառներում շարիաթը կիրառելու անհրաժեշտությունը շեշտելով՝ Իբն Թայմիան բացարձակ արժեք էր վերագրում Ղուրանին և Սուննային:

• Իբն Թայմիայի՝ պատմաքաղաքական կերպափոխումների համատեքստում ձևավորված տեսլականը՝ շարիաթական քաղաքականությունը, ըստ էության, ումման քաղաքականապես վերակազմակերպելու, ումմայի կառավարման հիմնական սկզբունքներին վերաբերող ծրագիր է, որն իրականացնելու դեպքում շարիաթի կանոններով առաջնորդվող իշխանությունը պետք է դառնար կրոնի պահպանման, հասարակական հարաբերություններում արդարության, համընդհանուր բարիքի հաստատման գործիք: Ստեղծված պայմաններում Իբն Թայմիան զերծ է մնում ինչպես փիլիսոփայական, ուտոպիստական, այնպես էլ խիստ պահպանողական, քարացած հայացքներից՝ առաջարկելով իր ժամանակի համար իրատեսական և ճկուն մոտեցումներ: Նրա տեսությունը, ըստ էության, միջանկյալ դիրք է զբաղեցնում արդեն գոյություն ունեցող մոտեցումների շրջանում: Իբն Թայմիան կառավարման նպատակ է համարում արտաքին և ներքին փոփոխությունների, գոյություն ունեցող մարտահրավերների համատեքստում հանրային շահը պաշտպանելը, այդ ուղղությամբ

լավագույն լուծումները գտնելը՝ հիմք ընդունելով Ղուրանը և Սուննան: Ելնելով ժամանակի իրողություններից՝ նա առաջարկում է ղեկավարի օրինական լինելու, ումման կառավարելու, հասարակական հարաբերությունները կարգավորելու նոր չափանիշներ՝ տարբերվելով քաղաքական տեսություններ առաջարկած նախորդ գործիչներից, համընդհանուր բարիքի հասնելու նպատակով ընդլայնում է թույլատրելիի սահմանները՝ հաշվի առնելով գործողությունների օգուտի և վնասի հարաբերակցությունը: Իբն Թայմիան, ըստ էության, վերահիմաստավորում է արդեն գոյություն ունեցող տեսությունները՝ դրանք դարձնելով առավել իրատեսական, կիրառական՝ նպատակ ունենալով կանխելու ումմայի ճգնաժամի հետագա խորացումը և վերականգնելու միասնությունը: Եթե բուիների և սելջուկների իշխանության պարագայում իսլամական քաղաքական մտքի ներկայացուցիչները փորձում էին առկա իրավիճակին օրինականություն հաղորդել՝ այս կամ այն կերպ մեկնաբանելով կրոնական դրույթները, Իբն Թայմիան խալիֆայության բացակայության պայմաններում չի փորձում իսլամական դրույթները հարմարեցնել առկա իրավիճակին, այլ, ելնելով ումմայի բարօրության առումով առաջնահերթ հարցերը լուծելու կարևորությունից, ընտրում է առավել օգտակար իրավիճակային լուծումներ՝ դրանց հիմնավորումները բխեցնելով Ղուրանից և Սուննայից:

• Իբն Թայմիան, ըստ էության, առաջինն էր, ով փորձեց կազմել Ղուրանի և Սուննայի վրա հիմնված իսլամական կառավարման ամբողջական հայեցակարգ՝ առաջարկելով արդյունավետ կառավարման իսլամական համապարփակ տեսություն, որը գերագույն իշխանության մոդելի հարցում փոխզիջումային տարբերակ ձևակերպելու փորձ է: Արդյունավետ կառավարումը հավասարակշռող երկու գործոններն են՝ կառավարող վերնախավի՝ հպատակների նկատմամբ ցուցաբերած հոգատարությունը, արդարացի ղեկավարումը և հպատակների հնազանդությունը: Փաստորեն, ի տարբերություն նախորդ տեսլականների, Իբն Թայմիայի տեսության առանցքում միայն ղեկավարը կամ կառավարող վերնախավը չեն, այն շատ ավելի ընդգրկուն է և ներառում է քաղաքական համակարգի վերին և ստորին շերտերը՝ ղեկավարներին և ենթականերին: Իբն Թայմիան շարիաթն ու աշխարհիկ գործիչների առաջարկած սիյասան չի հակադրում և առանձին չի դիտարկում, բայց և չի նույնացնում, այլ փորձում է հավասարակշռել և սերտորեն փոխկապակցել՝ առանց ժխտելու դրանց սահմանների և բնույթի տարբերությունը և, ըստ էության, միջին դիրք գրավելով նախորդ գործիչների և տեսությունների շրջանում: Արդյունավետ կառավարման գրավականը կրոնի և քաղաքականության միջև հավասարակշռություն հաստատելն է: Շարիաթը զբաղեցնում է գերակա դիրք և սահմանում քաղաքական գործողությունների թույլատրելիության շրջանակը, սակայն այն չի ընդգրկում քաղաքական արդյունավետ կառավարման բոլոր քայլերը, ուստի Իբն Թայմիան ընդլայնում է շարիաթի սահմանները և կիրառելիությունը ղեկավարման և քաղաքական հարցերի առնչությամբ՝ ներառելով փորձով և տրամաբանությամբ հիմնավորված քաղաքական որոշումները:

• Ումման քաղաքականապես կազմակերպելու՝ Իբն Թայմիայի տեսության համաձայն՝ իշխանությունն ու կրոնը փոխկապակցված են, պետական իշխանությունը կրոնի հենարանն է, իսկ կրոնին հետևելն ապահովում է իշխանության կայունությունը:

Իր ապրած ժամանակաշրջանի պատմական իրավիճակից ելնելով՝ Իբն Թայմիան ընդգծում է ումմայի միասնությունը և իսլամի մաքրությունը պահպանելու նպատակով քաղաքական իշխանության, ամուր պետական համակարգ հաստատելու անհրաժեշտությունը՝ անկախ կառավարչի անձնական որակներից: Պարտադիր պայմաններն էին ումմայի շահերից բխող քաղաքականություն իրականացնելը և ումման ղեկավարելիս շարիաթը պահպանելը: Իբն Թայմիան առաջարկում է այն մոտեցումը, որ շարիաթի օրենքները պահպանելը, հասարակության բարօրության նկատմամբ պատշաճ ուշադրությունը, հասարակության առջև պատասխանատվությունը գիտակցելը և կրոնական առաջնորդների կողմից իսլամական արժեքներին անընդհատ կոչը կարող են հանգեցնել մուսուլմանական հասարակության բարգավաճմանը անգամ անգործունակ կառավարչի դեպքում:

• Իբն Թայմիան ընդգծում է ալիմների, ֆակիհների հեղինակությունը և հասարակության քաղաքական կյանքը կազմակերպելուն նրանց մասնակցության անհրաժեշտությունը՝ այդպիսով ձգտելով վերահսկողություն հաստատել պետական պաշտոնյաների գործունեության նկատմամբ:

• Մամլուքյան իշխանությունների հետ Իբն Թայմիայի հարաբերությունները բարդ և հակասական էին: Մի կողմից՝ նա աջակցում էր մամլուքներին արտաքին թշնամիների դեմ պայքարում, որը բարձրացնում էր նրա՝ որպես շարիաթի և պետության պաշտպանի հեղինակությունը, իսկ մյուս կողմից՝ իսլամի տարբեր ուղղությունների, մազհաբների, տարածված պաշտամունքային ձևերի և կարգերի սուր քննադատությունը բազմիցս հանգեցնում է քաղաքական ղեկավարների և կրոնական նշանավոր գործիչների հետ բախումների և որպես հետևանք՝ ազատազրկումների: Իբն Թայմիան, գիտակցելով և ընդունելով, որ մամլուքյան իշխանությունները լիարժեքորեն չեն հետևում շարիաթին, այդուհանդերձ, կոչ է անում ենթարկվել նրանց, քանի որ, ըստ էության, մամլուքներն էին այն քաղաքական և ռազմական ուժը, որը քիչ թե շատ ունակ էր միավորելու ումման և պայքարելու իսլամական աշխարհին սպառնացող ուժերի՝ առաջին հերթին մոնղոլների դեմ:

• Ստեղծված ճգնաժամային իրավիճակից ելնելով՝ Իբն Թայմիայի գործունեությունն ու գաղափարները, ընդհանուր առմամբ, տեղավորվում են *մասլահա*՝ համընդհանուր շահ հասկացության շրջանակում: Ահա թե ինչու է նա որոշ արգելքներ թույլատրելի համարում միայն հանուն ումմայի բարօրության:

• Իբն Թայմիայի թողած ժառանգությունը դարձել է իսլամական արմատականության ժամանակակից միտումների ձևավորման տեսական և գաղափարախոսական հիմքերից մեկը: Իբն Թայմիայի գաղափարների արդիականությունը և պահանջված լինելը պայմանավորվում են այն հանգամանքով, որ դրանք ձևավորվել էին իսլամական հասարակության համար ճգնաժամային պայմաններում և միտված էին լուծելու կրոնահիրավագետի ապրած ժամանակաշրջանում ումմայի առջև ծառացած խնդիրները, որոնց մի մասը պահպանել է արդիականությունը նաև հետագա դարերի ընթացքում: Տարբեր են ուսումնասիրողների՝ Իբն Թայմիայի ազդեցությանը վերաբերող դիրքորոշումները, իսկ խմբավորումների գաղափարախոսների և առաջնորդների գրվածքներում առկա հղումները բավարար չեն՝ պնդելու, որ Իբն Թայմիայի գաղափարները ծայրահեղ

արմատական հայացքներ ունեցող խմբավորումներ ձևավորելու հիմք են: Այդ խմբավորումները ստեղծելը, դրանց գործունեությունը տվյալ դարաշրջանում տեղի ունեցող իրադարձությունների հետևանք են, դրանց առաջնորդները իրենց գործողությունները հիմնավորելու և իսլամական աշխարհին ընդունելի դարձնելու համար օգտագործել են հեղինակավոր ալիմների, այդ թվում՝ Իբն Թայմիայի աշխատանքները՝ վերցնելով միայն առանձին դրույթներ՝ ըստ իրենց գաղափարներն ու գործունեությունը հիմնավորելու և արդարացնելու անհրաժեշտության՝ անտեսելով և համատեքստից կտրելով կրոնահիրավագետի մտքերը՝ էական կարևորություն ունեցող նրբություններով:

Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքների ցանկ

1. Տիգրանյան Ս., Քրիստոսի աստվածային էության եվ «Սուրբ Երրորդության» դավանանքի մերժումը Իբն Թայմիայի (1263-1328) «Քիթաբ Ալ-Ջավաբ» աշխատության օրինակով, Արևելագիտության հարցեր, № 19, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2021, էջ 35-51:
2. Տիգրանյան Ս., Խալիֆայությանն առնչվող հարցերն Իբն Թայմիայի աշխատություններում, ՎԷՄ, ԹԻՎ 4 (92), 2025, էջ I-XIX:
3. Տիգրանյան Ս., Իբն Թայմիայի՝ սուֆիականության դեմ ուղղված քննադատություններն ըստ «Քիթաբ Ալ-Ջավաբ» աշխատության, Արևելագիտության հարցեր, № 24, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2023, էջ 131-153:
4. Тигранян С., Понятия «Хулул» И «Иттихад» в учении Ибн Таймийи (на примере произведения «Китаб аль-джаваб») Caucaso-Caspica, VIII-IX, РАУ, Ереван, 2023-2024, сс 65-74.
5. Тигранян С., Критика шиизма Ибн Таймийей согласно сочинению «Китаб аль-джаваб», Вестник Российско-Армянского (Славянского) университета (серия: гуманитарные и общественные науки), № 3 (46), Ереван, Издательство РАУ, 2023, сс 158-173.
6. Тигранян С., Критика деятельности Фатимидских халифов и отражение религиозных положений в учении Ибн Таймийи, Вестник Российско-Армянского (Славянского) университета (серия: гуманитарные и общественные науки), No. 3 (54), Ереван, Издательство РАУ, 2025, сс 178-190.
7. Tigranyan S., The influence of Ibn Taymiyyah's ideas on the formation of Wahhabi ideology. A comparison of some theologicalaspects (on the example of Muḥammad ibn ʿAbd al-Wahhāb's"Kitāb al-tawḥīd" and ibn Taymiyyah's"Kitab al-jawab"), VEM, № 3 (87), 2024, pp I-XV.
8. Tigranyan S., The debates around the createdness of the Qur'an: Ibn Taymiyyah's approach, Bulletin of the Institute of Oriental Studies,Vol. 5 No. 1, NAS RA, 2025, pp 14-27.

ТИГРАНЯН СЕДА ТИГРАНОВНА

ВИДЕНИЕ РАЗВИТИЯ ИСЛАМСКОГО ГОСУДАРСТВА И ОБЩЕСТВА В КОНТЕКСТЕ ГЕОПОЛИТИЧЕСКИХ ТРАНСФОРМАЦИЙ XIII–XIV ВЕКОВ (С ТОЧКИ ЗРЕНИЯ ИБН ТАЙМИЙИ)

Диссертация на соискание учёной степени кандитата исторических наук по специальности 07.00.02-«Всемирная история».
Защита состоится 13 июля 2026 года, в 14:00 часов на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедения, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Целью диссертации является комплексное исследование взглядов Ибн Таймийи (1263-1328) на причины ослабления исламской уммы в контексте исторических событий XIII–XIV веков, а также видения проповедника относительно путей преодоления сложившегося кризиса и политической организации общества. Научная новизна исследования заключается во всестороннем изучении идей Ибн Таймийи в свете поворотных исторических событий XIII–XIV веков и механизмов выработки ситуативных решений, основанных на историко-политических реалиях. Благодаря этому проясняются причины различных интерпретаций, уточняются положения, ставшие предметом научных разногласий, и в результате комплексного анализа раскрывается их целостное значение. Диссертация, содержащая новые акценты, представляет собой новый исследовательский ракурс, проливая свет на исторические, политические, социальные и культурные реалии рассматриваемого периода и позволяя объяснить процессы, связанные с дальнейшим развитием исламского общества.

Проведённый анализ показывает, что видение Ибн Таймийи о развитии исламского государства и общества, по существу, представляет собой путь адаптации средневековой исламской политической мысли к новой цивилизационной системе. Необходимость такой адаптации обусловлена историко-политическими реалиями и предполагает борьбу с нововведениями в религии как факторами, раскалывающими умму, а также выработку механизмов поиска наилучших решений, соответствующих конкретным обстоятельствам.

Диссертация состоит из введения, трёх глав (разделённых на соответствующие подглавы), заключения и списка использованной литературы.

Во **ВВЕДЕНИИ** обосновывается актуальность темы, формулируются цель и задачи исследования, определяются хронологические рамки диссертации, методологическая основа, научная новизна, теоретическая и практическая значимость, а также даётся краткий обзор использованной литературы.

В первой главе, озаглавленной «**ДЕЯТЕЛЬНОСТЬ ИБН ТАЙМИЙИ В КОНТЕКСТЕ ИСТОРИКО-ПОЛИТИЧЕСКИХ СОБЫТИЙ XIII–XIV ВЕКОВ**»,

рассматриваются исторические изменения, происходившие в исламском мире, которые потрясли умму, создав новую ситуацию в регионе, и которые составляют исторический контекст формирования взглядов Ибн Таймийи. В частности, рассматриваются падение Багдада в 1258 году и завершение пятисотлетней истории Аббасидского халифата, а также противостояние Мамлюкского султаната и монгольского Ильханата Ирана. Анализируется научная и общественная деятельность Ибн Таймийи, его участие в противодействии монгольским нашествиям, а также его отношения с властями Мамлюкского султаната. Кроме того, исследуется концепция джихада и взгляды Ибн Таймийи на неё, включая теоретические интерпретации; в частности, освещаются значение и важность джихада, его виды и цели. Также рассматриваются антимонгольские фетвы Ибн Таймийи, анализируются способы обоснования необходимости вооружённой борьбы против монголов с точки зрения ислама в контексте историко-политической ситуации того времени.

Во второй главе, озаглавленной «**НОВОВВЕДЕНИЯ КАК ПРИЧИНЫ РАСКОЛА УММЫ**», представлены все факторы и нововведения, которые, по мнению Ибн Таймийи, привели к расколу уммы и кризису в исламском мире. В контексте дискуссий предшественников Ибн Таймийи рассматривается его критика христианства. Подробно освещается критика различных направлений шиизма и их основных положений. Представлены противоречивые интерпретации исследователей относительно взглядов Ибн Таймийи на суфизм; к существующим исследованиям добавлены наши наблюдения, текстологический анализ и выводы. Также исследуются ключевые вопросы калама и подход Ибн Таймийи к их интерпретации.

В третьей главе диссертации, озаглавленной «**ПРИНЦИПЫ ВОССТАНОВЛЕНИЯ ЕДИНСТВА УММЫ И ОРГАНИЗАЦИИ ПОЛИТИЧЕСКОЙ ВЛАСТИ**», рассматриваются принципы выведения уммы из состояния распада после исторического перелома и политической организации общества, которые составляют программу управления уммой Ибн Таймийи, а именно «шариатскую политику», благодаря которой проповедник, по сути, занимает промежуточную позицию среди существующих теорий. Подробно изучаются и анализируются взгляды Ибн Таймийи на допустимость мулька и необходимость восстановления халифата, при этом параллельно рассматриваются иногда противоречивые интерпретации некоторых исследователей. Исследуются и представляются его подходы к политической власти как условию сохранения религии, к обязанностям и необходимым качествам правителя, вопросам сотрудничества с уммой, а также к возможности существования нескольких правителей одновременно, наряду с соответствующими наблюдениями исследователей. Кроме того, анализируются предложенные Ибн Таймией критерии регулирования взаимодействия представителей власти — политических руководителей и улемов — между собой и с обществом, а также решения финансовых и социально-экономических вопросов и вопросы справедливого применения наказаний.

В **ЗАКЛЮЧЕНИИ** подводятся итоги работы и формулируются основные результаты и выводы исследования.

TIGRANYAN SEDA TIGRANI

THE VISION OF THE DEVELOPMENT OF THE ISLAMIC STATE AND SOCIETY IN THE CONTEXT OF THE GEOPOLITICAL TRANSFORMATIONS OF THE 13TH–14TH CENTURIES (FROM THE PERSPECTIVE OF IBN TAYMIYYAH)

Dissertation for the degree of Candidate of Historical Sciences on the specialization of " World History" 07.00.02.

The defense of the dissertation will be held on July 13, 2026, at 14:00 at the meeting of the HESC Specialized Council 006 on " World History" at the Institute of Oriental Studies. Address: 24/4 Marshal Baghramyan Ave., Yerevan, 0019.

SUMMARY

The aim of the dissertation is to provide a comprehensive study of the views of Ibn Taymiyyah (1263-1328) on the causes behind the weakening of the Islamic ummah in the context of the historical events of the 13th–14th centuries, as well as the religious scholar's vision regarding the ways of overcoming the emerging crisis and the political organization of society. The scientific novelty of the study lies in a comprehensive examination of Ibn Taymiyyah's ideas in the light of pivotal historical events of the 13th–14th centuries and the mechanisms for developing situational responses based on historical and political realities. This approach helps clarify the reasons for divergent interpretations, refine the propositions that have been the subject of scholarly disagreement, and, through a comprehensive analysis, reveal their full significance. The dissertation, incorporating new emphases, offers a novel research perspective, shedding light on the historical, political, social, and cultural realities of the period under study, and enabling an explanation of processes related to the subsequent development of Islamic society.

The analysis demonstrates that Ibn Taymiyyah's vision of the development of the Islamic state and society essentially constitutes a path for adapting medieval Islamic political thought to a new civilizational order. The need for such adaptation arises from historical and political realities and encompasses both the struggle against religious innovations as factors that divide the ummah and the development of mechanisms for identifying the most appropriate solutions to specific circumstances.

The dissertation consists of an introduction, three chapters (divided into corresponding sub-chapters), a conclusion, and a list of references.

The **INTRODUCTION** substantiates the relevance of the topic, formulates the aim and objectives of the study, defines the chronological scope of the dissertation, the methodological framework, its scientific novelty, theoretical and practical significance, and provides a brief review of the literature used.

In the first chapter, titled "**IBN TAYMIYYAH'S ACTIVITY IN THE CONTEXT OF THE HISTORICAL AND POLITICAL EVENTS OF THE 13TH–14TH CENTURIES**," attention is given to the historical transformations taking place in the Islamic world, which shook the ummah and created a new regional situation, and which constitute the historical context for the formation of Ibn Taymiyyah's views. In particular, the chapter examines the fall of Baghdad in 1258 and the end of the five-hundred-year history of the Abbasid Caliphate, as well as the conflict between the Mamluk Sultanate and the Mongol Ilkhanate of Iran. It also analyzes Ibn Taymiyyah's scholarly and social activities, his participation in resisting the Mongol invasions, and his relations with the Mamluk authorities. Furthermore, the concept of jihad and Ibn Taymiyyah's views on it are examined, including its theoretical interpretations; in particular, the significance and importance of jihad, its types, and its objectives are discussed. The chapter also examines Ibn Taymiyyah's anti-Mongol fatwas and analyzes the ways in which the necessity of armed struggle against the Mongols was justified from the perspective of Islam within the historical and political context of the period.

In the second chapter, entitled "**INNOVATIONS AS CAUSES OF THE FRAGMENTATION OF THE UMMAH**," all the factors and innovations that, according to Ibn Taymiyyah, led to the fragmentation of the ummah and the crisis in the Islamic world are presented. Within the context of debates among Ibn Taymiyyah's predecessors, his critique of Christianity is discussed. A detailed account is provided of his criticism of various branches of Shiism and their core doctrines. Conflicting scholarly interpretations of Ibn Taymiyyah's views on Sufism are presented, to which our own observations, textual analysis, and conclusions are added. The key issues of kalām and Ibn Taymiyyah's approach to their interpretation are also examined.

In the third chapter of the dissertation, entitled "**THE PRINCIPLES OF RESTORING THE UNITY OF THE UMMAH AND ORGANIZING POLITICAL AUTHORITY**," the principles for bringing the ummah out of a state of disintegration after a historical turning point and for the political organization of society are examined. These constitute Ibn Taymiyyah's program for governing the ummah, namely "Sharia-based politics," through which the religious jurist, in essence, occupies an intermediate position among existing theories. Ibn Taymiyyah's views on the permissibility of mulk and the necessity of restoring the caliphate are examined and analyzed in detail, while simultaneously addressing occasionally conflicting interpretations offered by various scholars. His approaches to political authority as a condition for the preservation of religion, the duties and required qualities of the ruler, issues of cooperation with the ummah, and the possibility of the existence of multiple rulers are studied and presented, alongside relevant scholarly observations. Furthermore, the criteria proposed by Ibn Taymiyyah for regulating cooperation between representatives of authority-political leaders and scholars-as well as with society, are analyzed, including financial and socio-economic issues and the fair application of punishments.

The **CONCLUSION** summarizes the main results of the study and presents the principal findings and conclusions.